ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

0078 Երևան, Հալաբյան 41ա, Հեռ.՝ 010 594 192
Էլ. հասցե՝ hayrapetyan.gevorg@moj.am

Վարչական վարույթ. գործ N-021/12/18

ՈՐՈՇՈՒՄ

«Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին սպուգելու վերաբերյալ

25.02.2019թ. *ք. Երևան*

ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ նաեւ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Գործակալություն) պետ Գեւորգ Հայրապետյանս՝ ուսումնասիրելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ նաեւ՝ ՀԿ) նախագահ Շուշան Դոյդոյանի կողմից Գործակալությանը 2018 թվականի նոյեմբերի 30-ին հասցեագրված (դեկտեմբերի 3-ին ստացված) դիմումի առիթով Անձնական տվյալների պաշտպանության գործակալության նախաձեռնությամբ 2018 թվականի դեկտեմբերի 3-ին հարուցված N-021/12/18 վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

1. **Գործի նախապատմությունը.**

1.1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Շուշան Դոյդոյանը հայտնել է, որ առիթ են ունեցել առնչվել www.dasaran.am-ի կողմից երեխաների անձնական տվյալների մշակման խնդրին: ՀԿ-ի նախագահը նշել է, որ dasaran.am-ն ըստ էության մշակում է ՀՀ բոլոր դպրոցական անչափահասների անձնական բազմատեսակ տվյալներ, սակայն

հայտնի չեն դրանց մշակման շրջանակները, իսկ դրանց հետ կատարվող գործողությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ անձնական տվյալների մշակման ոչ օրինական կամ ոչ համաչափ լինելու կասկածներ են հարուցում: Որպես օրինակ նշվել է անձնական տվյալներն այլ անձանց փոխանցելը կամ անձնական տվյալներն առեւտրային նպատակներով օգտագործելը՝ վաճառելը):

1.2. ՀԿ-ն կասկածներ է հայտնել, որ www.dasaran.am-ի կողմից (միջոցով) երեխաների անձնական տվյալների մշակումը հակասում է «Անձնական տվյալների պաշտպանության մասինե ՀՀ օրենքով եւ ԵԽ 108 Կոնվենցիայով սահմանված՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին:

1.3. ՀԿ-ն խնդրել է ստուգել www.dasaran.am-ի կողմից (միջոցով) երեխաների անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին եւ կայացնել համապատասխան որոշում:

2. <u>Վարույթի հիմքերը եւ հիմնավորումները.</u>

Գործակալության նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կատարվում է հետևյալ հիմքի սահմաններում և ներքոհիշյալ հիմնավորումներով.

2.1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ ա) անձի դիմումը, բողոքը. բ) վարչական մարմնի նախաձեռնությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ «... վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը»:

2.2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը»:

2.3. ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը ՀՀ կառավարության՝ 2015թ.-ի հուլիսի 2-ի 734-Ն որոշմամբ ճանաչվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազոր մարմին:

2.4. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ 1) ստուգում է իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա անձնական տվյալների մշակման համապատասխանությունը սույն օրենքի պահանջներին»:

2.5. Նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ … 3) պահանջում է արգելափակել, կասեցնել կամ դադարեցնել սույն օրենքի պահանջները խախտող անձնական տվյալների մշակումը»,

2.6. Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝՝ « … 4) օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում մշակողից պահանջում է անձնական տվյալների ուղղում, փոփոխում, ուղեփակում կամ ոչնչացում»:

2.7. Նույն մասի 12-րդ կետի համաձայն՝ «Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ … 12) ապահովում է տվյալների սուբյեկտի իրավունքների պաշտպանությունը»:

2.8. Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը հիմնվել է նաեւ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ եւ 34-րդ հոդվածների իրավակարգավորումների վրա:

2.9. Սույն վարույթը կատարվում է՝ հիմնվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների վրա, մասնավորապես՝ Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված օրինականության, ինչպես նաեւ Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքների վրա:

3. <u>Վարույթի համար նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն վարչական վարույթի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

3.1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2018 թվականի նոյեմբերի 30-ին Գործակալությանը դիմում է հասցեագրել, որով խնդրել է ստուգել www.dasaran.am-ի կողմից (միջոցով) երեխաների անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին եւ կայացնել համապատասխան որոշում:

3.2. www.dasaran.am կայքը գործարկվում է «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում «Նոր Սերնդի Դպրոց» հասարակական կազմակերպության (այսուհետ նաեւ՝ Նոր Սերնդի Դպրոց) կողմից:

3.3. Վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի դեկտեմբերի 13-ին նշանակվել են վարչական լսումներ, որոնց վարույթի մասնակիցները չեն ներկայացել:

3.4. 2018 թվականի դեկտեմբերի 12-ին Նոր Սերնդի Դպրոցի տնօրեն Սուրեն Ալոյանի կողմից Գործակալությանը գրություն է հասցեագրել՝ վարչական լսումները հետաձգելու վերաբերյալ:

3.5. Վարչական լսումները հետաձգելու վերաբերյալ գրությունը հաշվի առնելով՝ վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի դեկտեմբերի 13-ին

նշանակված լսումները տեղափոխվել են եւ նշանակվել 2018 թվականի դեկտեմբերի 21-ին:

3.6. 2018 թվականի դեկտեմբերի 20-ին Նոր Սերնդի Դպրոցի տնօրեն Սուրեն Ալոյանի կողմից Գործակալությանը գրություն է հասցեագրել, որով ի թիվս այլնի նշել է, որ Նոր Սերնդի Դպրոցը որեւէ դեպքում որեւէ կերպ մշակվող անձնական տվյալները առեւտրային նպատակներով չի օգտագործել եւ երրորդ անձանց չի փոխանցել: Գրությամբ Նոր Սերնդի Դպրոցի տնօրենը միջնորդել է վարույթն իրականացնել գրավոր կարգով, ինչպես նաեւ միջնորդել է Գործակալությանը գրավոր հարցմամբ պահանջել վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:

3.7. Գործակալությունը, ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով՝ դիմել է Նոր Սերնդի Դպրոցին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1) «Դասարան» կրթական շրագրի շրջանակներում մշակվող անձնական տվյալների սուբյեկտների շրջանակը՝ ու՞մ անձնական տվյալներն են մշակվում,

2) «Դասարան» կրթական շրագրի շրջանակներում մշակվող անձնական տվյալների ցանկը՝ ի՞նչ անձնական տվյալներ են մշակվում,

3) Անձնական տվյալներ մշակելու նպատակը,

4) Անձնական տվյալներ մշակելու իրավական հիմքը՝ ո՞րն է տվյալների մշակման հիմքը (համաձայնութուն, օրենք կամ այլ իրավական ակտ, հանրամատչելի աղբյուր), խնդրում եմ նաեւ տրամադրել համապատասխան իրավական հիմքը (պատճենը կամ տեքստը կամ հրապարակման վայրը)

5) Անձնական տվյալների հետ կատարվող գործողությունների ցանկը, անձնական տվյալների մշակման եղանակների նկարագիրը,

6) Այն անձանց շրջանակը, որոնց փոխանցվում կամ կարող են փոխանցվել անձնական տվյալները,

7) Այն երկրները, ուր փոխանցվում կամ կարող են փոխանցվել անձնական տվյալները,

8) Այն միջոցների նկարագիրը, որոնք իրականացվում են անձնական տվյալները մշակելու անվտանգության ապահովման ուղղությամբ,

9) Տվյալների սուբյեկտի կողմից անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում պահանջելու կամ համաձայնությունը հետ կանչելու իրավունքի իրացման կամ մշակման հետ կապված այլ գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկություններ,

10) Անձնական տվյալների մշակումն սկսելու ամսաթիվը.

11) Անձնական տվյալների մշակումն ավարտելու ժամկետները և պայմանները:

3.8. Գործակալության հարցմանն ի պատասխան՝ Նոր Սերնդի Դպրոցը ներկայացրել է հարցման պատասխանները՝ ըստ հերթականության.

1) «Դասարան» կրթական ծրագրի կողմից մշակվում են հետեւյալ անձանց/օգտատերերի տվյալները՝

- աշակերտ,
- ծնող,
- ուսուցիչ,
- օպերատոր (անձ, ով դպրոցի կողմից իրականացնում է տվյալների նախնական մուտքագրումները. կարող է լինել նաեւ ուսուցիչ),
- փոխտնօրեն,
- տնօրեն:

2) Ստորեւ ներկայացվում է մշակվող անձնական տվյալների ցանկը՝ ըստ անձնական տվյալների սուբյեկտների: Տվյալների հիմնական մասը մուտքագրվում է դպրոցների կողմից՝ բացառությամբ որոշ անձնական տվյալների, որոնք մուտքագրվում են տվյալների սուբյեկտ հանդիսացող անձանց կողմից:

Աշակերտ - անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, երկիր, ծննդյան վկայականի համար/տրման ամսաթիվ, դպրոց, դասարան, ծննդյան ամսաթիվ, էլ. փոստ, նկարներ,

Ծնող - անուն, ազգանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, երկիր, էլ. հասցե, նկարներ,

Ուսուցիչ - անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, էլ. հասցե, երկիր, դպրոց, առարկա, դասավանդող,

Օպերատոր - անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, հեռախոսահամար, էլ. հասցե, երկիր, դպրոց,

Փոխտնօրեն - անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, ծննդյան ամսաթիվ, էլ. հասցե, երկիր, դպրոց, պաշտոն, կցված դասարաններ,

Տնօրեն - անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, ծննդյան ամսաթիվ, հեռախոսահամար, էլ. հասցե, երկիր, դպրոց, նկարներ:

3) Դասարան» կրթական ծրագրի կողմից անձնական տվյալները մշակվում են հետեւյալ նպատակներով.

- կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը միտված առկա թվային գործիքների կատարելագործման նպատակով,
- կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը միտված նոր գործիքների ներդրման նպատակով,
- սովորող-ծնող-դպրոց անընդհատ կապի պահպանման համար անհրաժեշտ միջոցների զարգացման, ինչպես նաև երեխաների կրթության գործընթացում ծնողների առավել ակտիվ ներգրավվածությունը ապահովող նոր, առցանց գործիքների ներդրման նպատակով,

- սովորողների ինտելեկտուալ շփման, դպրոցական, միջդպրոցական և համահայկական ինտելեկտուալ մրցույթների, խաղերի և կրթությունը խրախուսող այլ միջոցառումների միջոցով խելացի և շնորհալի սովորողների բացահայտման ու նրանց խրախուսման նպատակով,
- հայապահպանությանը միտված Dasaran կրթական հարթակի համահայկականացման նպատակով (մասնավորապես՝ Սփյուռքի համայնքների հայկական կրթօջախների ներառում, դպրոցահասակ երեխաներին հարթակից օգտվելու հնարավորության ընձեռում),
- կայքում օգտատիրոջ կողմից գրանցվելու գործընթացի ապահովման, օգտատիրոջ անհատականացման, կեղծ օգտատերերի գրանցումը բացառելու նպատակով,
- կայքի աշխատանքների առնչությամբ օգտատերերի հետ կապ հաստատելու, նրանց կողմից ուղղված հաղորդագրություններին, նամակներին և հեռախոսազանգերին պատասխանելու նպատակով:

Տվյալները կարող են մշակվել եւ վերլուծության ենթարկվել նաեւ՝

- կայքի աշխատանքների կառավարման եւ բարելավման նպատակով,
- կայքի օգտագործման հնարավորությունների զարգացման եւ բարելավման նպատակով,
- կայքի աշխատանքի թերությունների հայտնաբերման եւ կանխման նպատակով:

4) Անձնական տվյալների մշակման համար հիմք են հանդիսանում՝

- « Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
- ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ Նոր Սերնդի Դպրոցի միջեւ 2016 թվականի նոյեմբերի 4-ին կնքված փոխըմբռնման հուշագիրը,
- «Դասարան» կրթական ծրագրի «Անձնական տվյալների պահպանման քաղաքականություն»

5) Անձնական տվյալների հետ կատարվող գործողությունները՝

- հավաքում,
- համակարգում,
- պահպանում,
- վերլուծում,
- արխիվացում,
- ոչնչացում:

Անձնական տվյալները մշակվում են ավտոմատացված եղանակով:

6) Նոր Սերնդի Դպրոցը չի տրամադրում օգտատերերի անձնական տվյալները որևէ երրորդ անձի բացառությամբ ստորեւ նշված դեպքերի. Նոր Սերնդի Դպրոցը կարող է որոշակի անձնական տվյալներ պարունակող վերլուծական նյութեր տրամադրել Հայաստանի Հանրապետության կամ

Արցախի Հանրապետության կրթության և գիտության նախարարություններին, ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության տարածքից հավաքագրված անձնական տվյալները, իսկ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը տրամադրվում են միայն Արցախի Հանրապետության տարածքից հավաքագրված անձնական տվյալները:

7) Նոր Սերնդի Դպրոցը կարող է որոշակի անձնական տվյալներ պարունակող վերլուծական նյութեր տրամադրել Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության կրթության և գիտության նախարարություններին:

8) «Դասարան» կրթական ծրագիրը կիրառում է անվտանգության ապահովման ֆիզիկական, տեխնիկական և կազմակերպչական՝ իր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցները օգտատերերի անձնական տվյալները որևէ չթույլատրված արտահոսքից, կիրառումից, փոփոխությունից և ոչնչացումից պաշտպանելու համար: Օգտատերերից յուրաքանչյուրին տրամադրվում է ծածկանուն եւ ծածկագիր անհատական էջ մուտք գործելու համար: Ըստ որում՝ ծնողին տեսանելի են միայն իր երեխայի տվյալները, ուսուցչին՝ միայն իր դասարանին (դասարաններին) եւ իր կողմից դասավանդվող առարկային վերաբերող տվյալները, փոխտնօրենին եւ տնօրենին՝ միայն իրենց դպրոցի տվյալները: Հետեւաբար, ծնողին տեսանելի չեն որեւէ այլ երեխայի առաջադիմության վերաբերյալ տվյալներ, ուսուցչին՝ որեւէ այլ դասարանի կամ առարկայի վերաբերյալ տվյալներ, փոխտնօրենին եւ տնօրենին՝ որեւէ այլ դպրոցի տվյալներ: Կայքում գործում է հաղորդակցության փակ հարթակ, որտեղ անհատական ծածկանվան եւ ծածկագրերի օգնությամբ մուտք գործելով՝ օգտատերը կարող է տեսնել այլ օգտատերերի հետեւյալ տվյալները՝ անունը, ազգանունը, դպրոցը եւ դասարանը: Հավաքագրվող ամբողջական տվյալները որեւէ մեկին հասանելի չեն: «Դասարան» կրթական ծրագրի աշխատակիցների պարագայում ամբողջական տվյալների հասանելիությունը եւս սահմանափակ է, տվյալներին որեւէ կերպ հասանելիություն ունեցող յուրաքանչյուր աշխատակից կազմակերպության հետ կնքում է գաղտնիության պայմանագիր:

Տեղեկությունների անվտանգության ապահովման տեխնիկական միջոցները հետեւյալն են՝

- End to End գաղտնագրում՝ օգտագործելով SSL, HTTPS, SSH, Ipsec, VPN,

- Web Frontened Proxy՝ DDOS պաշտպանության, վեբկայքերի հավելվածների անվտանգության պաշտպանության եւ WAF-ի (վեբ հավելվածների արգելապատնեշ) հետ (Cloudflare),
- վեբ հավելվածների եւ հաղորդակցության արգելապատնեշներ,
- մեկուսացված եւ կոնտեյնավորված միջավայր, որտեղ յուրաքանչյուր ծառայություն գործում է իր առանձնացված միջավայրում,
- բոլոր backend սերվերների ցանցային մեկուսացում (բոլոր backend սերվերներն առանձնացված են հանրային ցանցից, իսկ 80 եւ 433 մուտքերը բաց են միայն Cloudflare IP հասցեների համար):

9) Կայքում գրանցվելուց հետո օգտատերերն իրավունք ունեն մուտք գործելու իրենց հաշիվ և ծանոթանալու ծրագրի կողմից մշակվող իրենց անձնական տվյալներին: Օգտատերերն իրավունք ունեն օրենքով սահմանված դեպքերում կազմակերպությունից պահանջելու կամ կայքում, հնարավորության առկայության պարագայում, ինքնուրույն կատարելու ստորև նշված գործողությունները, իսկ նման հնարավորության բացակայության պարագայում դիմելու համապատասխան դպրոցին ստորև նշված գործողությունների կատարման համար՝

- իր անձնական տվյալների ուղղում,
- իր անձնական տվյալների ոչնչացում,
- իր անձնական տվյալների ուղեփակում:

Օգտատերերը նաև իրավունք ունեն՝

- հետ կանչելու անձնական տվյալները ծրագրի կողմից մշակելու համար տրված համաձայնությունը,
- ստանալու անձնական տվյալները էլեկտրոնային ձևաչափով և փոխանցելու դրանք երրորդ անձի,
- օգտվելու Հայաստանանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Օգտատերերի կողմից անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնությունը պատշաճ կերպով հետ կանչելու պարագայում, կազմակերպությունը կդադարեցնի անձնական տվյալների մշակումը և կոչնչացնի օգտատիրոջ կողմից տրամադրված անձնական տվյալները հետկանչն ստանալու օրվան հաջորդող երեսուն աշխատանքային օրվա ընթացքում: Անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնության հետկանչի դեպքում կարող է փակվել կամ ժամանակավորապես արգելափակվել (սառեցվել) անձնական հաշիվը կայքում:

10) Անձնական տվյալների մշակումը սկսվում է այն պահից, երբ համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրամադրվում են հիմնական անձնական տվյալները:

11) «Դասարան» կրթական ծրագիրը մշակում եւ պահպանում է օգտատերերի անձնական տվյալները այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է «Անձնական

տվյալների պահպանիամ քաղաքականություն»-ում եւ ՀՀ ԿԳՆ հետ կնքված հուշագրում ներկայացված անձնական տվյալների մշակման նպատակներին հասնելու համար, եթե այլ ժամկետ սահմանված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

3.9. 2018 թվականի դեկտեմների 21-ին նշանակված վարչական լսումներին մասնակցել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանը:

3.10. Լսումների ընթացքում ՀԿ-ի նախագահը նշել է, որ մտահոգված է իրենց հասած հետեւյալ տեղեկություններով. որեւէ հանրամատչելի հարթակում առկա չէ տեղեկություն տվյալների մշակման հստակ նպատակների մասին, տվյալների մշակման իրավական հիմքի մասին եւ հայտնի չէ, թե ինչպես է ստացվում տվյալների մշակման համաձայնությունը, կամ ստացվում է, թե՝ ոչ, հայտնի չեն համաձայնությունը հետ կանչելու տարբերակները, ինչպես նաեւ հայտնել է, որ ըստ իր տեղեկությունների «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվում են երեխաների կրոնական պատկանելության եւ առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ, որոնք հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ են, նաեւ՝ տվյալները փոխանցվում են երրորդ անձանց, այդ թվում՝ այլ երկրներ, ինչպես նաեւ տվյալներին հասանելիություն ունեն պետական մարմինները, մասնավորապես ՀՀ վարչապետի աշխատակազմը, ՀՀ նախագահի աշխատակազմը, ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը եւ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը:

3.11. ՀԿ-ի նախագահը լրացուցիչ հայտնել է, որ ըստ իր տեղեկությունների՝ «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվող անձնական տվյալներին հասանելիություն ունեն Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակը եւ «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը:

3.12. Գործակալությունը, ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով, դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմին, ՀՀ նախագահի աշխատակազմին, ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը, ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը, Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակին եւ «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությանը եւ խնդրել է տրամադրել սույն վարույթի համար անհրաժեշտ հետեւյալ տեղեկությունները.

> «1. Արդյո՞ք (...) փոխանցվում են «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվող տվյալները կամ (...)-ը որեւէ այլ կերպ ունի՞ դրանց հասանելիություն,
>
> 2. Եթե այո. ապա խնդրում եմ հայտնել, թե ո՞րն է այն իրավական հիմքը, որով իրականացվում է տվյալների տրամադրումը (տվյալներին հասանելիությունը) (...):»:

3.13. Գործակալության հարցմանն ի պատասխան՝ ՀՀ վարչապետի աշխատակազմից հայտնել են, որ ՀՀ վարչապետի աշխատակազմը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով չի հանդիսանում «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակող և այդ տվյալները վարչապետի աշխատակազմին որեւէ կերպ հասանելի չեն:

3.14. Գործակալության հարցմանն ի պատասխան՝ ՀՀ նախագահի աշխատակազմից հայտնել են, որ ՀՀ նախագահի աշխատակազմին «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալներ չեն փոխանցվում, ինչպես նաեւ ՀՀ նախագահի աշխատակազմը որեւէ այլ կերպ դրանց հասանելիություն չունի:

3.15. Գործակալության հարցմանն ի պատասխան՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունից հայտնել են, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվող տվյալներ չեն փոխանցվում: «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակված տվյալները, «Նոր սերնդի դպրոց» հասարակական կազմակերպության կողմից որոշված սահմանափակումներով, հասանելի են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին և նախարարի տեղակալին: Վերջիններս համակարգ մուտք են գործում տրամադրված մուտքանունների և գաղտնաբառերի միջոցով:

3.16. Գործակալության հարցմանն ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից ի թիվս այլնի հայտնել են, որ ՀՀ պաշտպանության նախարարությանը հասանելի չէ եւ չի փոխանցվել «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվող որեւէ անձնական տվյալ:

3.17. Գործակալության հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից հայտնել են, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվող տվյալներին հասանելիություն չունի, այդ տվյալները ՀՀ ԱԱԾ չեն փոխանցվում:

3.18. Գործակալության հարցմանն ի պատասխան՝ Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակից ի թիվս այլնի հայտնել են, որ ՀԲ-ի գրասենյակը երբեւէ եւ որեւէ ծրագրի շրջանակներում հասանելիություն չի ունեցել «Դասարան» կրթական ծրագրի անձնական տվյալների շտեմարանին:

3.19. Գործակալության հարցմանն ի պատասխան՝ «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունից ի թիվս այլնի հայտնել են, որ «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությանը երբեւէ չեն փոխանցվել «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվող՝ երեխաների անձնական տվյալները, կազմակերպությանն է փոխանցվել միայն վերլուծական տեղեկատվություն, որը չի պարունակել որեւէ անձնական տվյալ երեխաների մասին:

3.20. Գործակալությունը երկրորդ անգամ է դիմել ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե ՀՀ կրթության եւ գիտության

նախարարին եւ նախարարի տեղակալին «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվող ի՞նչ տվյալներ են հասանելի:

3.21. Գործակալության երկրորդ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունից հայտնել են, որ ՀՀ կրթության և գիտության նախարարին և նախարարի տեղակալին հասանելի են «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակված, ապանձնավորված հետևյալ տվյալները՝

1) Արտագաղթի ցուցանիշերը՝ ըստ մարզերի.
2) Աշակերտների բաշխվածությունը՝ ըստ մարզերի.
3) Գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների քանակը՝ տոկոսային արտահայտմամբ.
4) Բացակայությունների քանակը՝ տոկոսային արտահայտմամբ.
5) Աշակերտների առաջադիմությունն՝ ըստ առարկաների.
6) Յուրաքանչյուր մարզում աշակերտների բաշխվածությունը՝ ըստ սեռի.
7) Աշակերտների բաշխվածությունը՝ ըստ սեռի.
8) Դասարանների միջին խտությունը:

3.22. 2019 թվականի հունվարի 8-ին եւ 18-ին վարույթը երկարաձգվել է 10-ական օրով:

3.23. 2018 թվականի հունվարի 28-ին վարույթը կասեցվել է վարույթով վերջնական որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկությունները ստանալու համար եւ վերսկսվել է կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունից Գործակալության երկրորդ հարցման պատասխանը ստանալուց հետո:

3.24. Գործակալությունը երկրորդ անգամ է դիմել է Նոր Սերնդի Դպրոցին՝ խնդրելով հայտնել, թե ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը տրամադրվող վերլուծական նյութերում ի՞նչ անձնական տվյալներ կարող են ներառվել, ինչպես նաեւ հայտնել՝ արդյո՞ք «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնավորված ձեւով մշակվում են աշակերտների բացակայությունների, առաջադիմության եւ նման այլ տեղեկություններ:

3.25. Գործակալության երկրորդ հարցմանն ի պատասխան՝ Նոր Սերնդի Դպրոցը հայտնել է, որ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը տրամադրվող վերլուծական նյութերում անձնական տվյալներ չեն ներառվում, տրամադրվում են ապանձնավորված վերլուծված տեղեկություններ: Նաեւ նշել են, որ «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվում են աշակերտների բացակայությունների, առաջադիմության (գնահատականների), ուսման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ, որոնք օգտագործվում են ապանձնավորված ձեւով վերլուծություններ կատարելու համար: Նոր Սերնդի Դպրոցը ներկայացրել է «Դասարան» (dasaran.am) էլեկտրոնային միջավայրի (կայքի) «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» վերախմբագրված տարբերակը:

3.26. Վարույթի ընթացքում «Անձնական տվյալների պահպանման քաղաքականություն» վերտառությամբ բաժին է ավելացել dasaran.am կայքում:

4. <u>Պատճառաբանություններ և եզրահանգումներ.</u>

Ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի.

4.1. Սույն վարչական վարույթով անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք խնդրո առարկա տեղեկություններն անձնական տվյալներ են: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ է «ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը.»:

Հետեւաբար, սույն վարույթի խնդրո առարկա տեղեկություններն անձնական տվյալներ են:

4.2. Սույն վարչական վարույթը հարուցվել է պարզելու համար «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

4.3. Նախ, սույն վարչական վարույթով որոշում կայացնելու համար անհրաժեշտ է պատասխանել հետեւյալ հարցին՝ համապատասխանում է արդյոք «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակումն անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքին:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով»: Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «1. Անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե՝ 1) տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, 2) մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից»:

Վերոնշյալից բխում է, որ անձնական տվյալների մշակումը կհամապատասխանի տվյալների մշակման օրինականության սկզբունքին, եթե առկա է անձնական տվյալների մշակման ***օրինական եւ որոշակի նպատակ***, մշակումն իրականացվի կամ անձնական տվյալի սուբյեկտի ***համաձայնությամբ***, կամ համաձայնության բացակայության դեպքում մշակումը նախատեսված լինի ***օրենքով***, կամ տվյալները ձեռք բերվեն անձնական տվյալների ***հանրամատչելի աղբյուրներից:***

4.4. ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ Նոր Սերնդի Դպրոցի միջեւ 2016 թվականի նոյեմբերի 4-ին կնքված փոխըմբռնման հուշագրով (այսուհետ նաեւ՝ Հուշագիր) սահմանվել են նախարարության եւ Նոր Սերնդի Դպրոցի համագործակցության շրջանակները, որոնցից էլ արդյունքում բխել են «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման նպատակները: Հուշագրով նաեւ սահմանվել են համագործակցության ձեւերը: Սակայն, Գործակալությունն արձանագրում է, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի իմաստով Հուշագիրը օրենք չէ, հետեւաբար, սույն վարույթով քննարկվող՝ «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակումը պայմանավորված չի եղել օրենքի պահանջի կատարմամբ:

4.5. Գործակալությունն արձանագրում է, որ սույն վարույթով քննարկվող անձնական տվյալները ձեռք չեն բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից:

4.6. Հետեւաբար, անհրաժեշտ է գնահատել խնդրո առարկա անձնական տվյալների մշակման համաձայնության առկայությունը:

Գործակալությունը, հիմնվելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ «Անձնական տվյալների մշակման ընթացքում մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության մասին» դիրեկտիվի կարգավորումների եւ Եվրամիության Հոդված 29 Անձնական տվյալների պաշտպանության աշխատանքային խումբի մեկնաբանությունների վրա, թիվ N-001/01/17 գործով կայացրած իր որոշմամբ արձանագրել է, որ համաձայնություն է 1) վ եւ այն պետք է լինի 2) «ազատ տրված», 3) «որոշակի» եւ 4) «տեղեկացված»: Ընդ որում, «ցանկացած կամահայտնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը» չափանիշից բխում է, որ սկզբունքորեն չկան սահմանափակումներ, թե համաձայնությունն ինչ ձեւով պետք է վերցվի, սակայն այն պետք է լինի կամահայտնություն: Համաձայնությունը կարող է տրվել գրավոր՝ հաստատված ստորագրությամբ, բանավոր, գործողության միջոցով, որն ակնհայտ վկայում է համաձայնության մասին: Թեեւ համաձայնությունը կարող է տրվել ցանկացած ձեւով, սակայն այն պետք է հստակ արտացոլի տվյալների սուբյեկտի կամքը իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ: Այսինքն, համաձայնությունը պետք է լինի «միանշանակ»: Սա նշանակում է, որ չպետք է որեւէ կասկած մնա, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունն ուղղված է հենց անձնական տվյալների մշակմանը: Այլ կերպ ասած՝ տվյալների սուբյեկտի կամահայտնությունը, որով նա տալիս է իր հավանությունն անձնական տվյալների մշակման վերաբերյալ, պետք է միանշանակորեն վկայի տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ, իսկ եթե կա տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ ողջամիտ կասկած, ապա համաձայնությունը չի կարող համարվել միանշանակորեն տրված: Համաձայնության՝ «ազատ տրված» լինելու չափանիշը նշանակում է, որ համաձայնությունը կարող է վավեր համարվել, եթե տվյալների սուբյեկտը

համաձայնությունը տվել է իր իրական ընտրությամբ (ազատ, կամավոր որոշմամբ), առանց խաբեության, սպառնալիքի, հարկադրանքի կամ համաձայնություն չտալու դեպքում իր համար բացասական հետեւանքի: Եթե համաձայնություն տալ կամ չտալու հետեւանքները խաթարում են անձի ազատ ընտրությունը (freedom of choice), ապա համաձայնությունը չի համարվի ազատ տրված: Համաձայնության՝ «որոշակի» լինելու չափանիշիը նշանակում է, որ համաձայնությունը կարող է վավեր համարվել, եթե այն կոնկրետ է: Այլ կերպ ասած, ընդհանուր համաձայնությունը, առանց անձնական տվյալի ճշգրիտ նպատակը մանրամասնելու, ընդունելի չէ: Համաձայնությունը պետք է լինի հասկանալի, այսինքն, այն պետք է վերաբերի անձնական տվյալների մշակման հստակ եւ ճշգրիտ շրջանակի: Վերջապես, համաձայնության՝ «տեղեկացված» լինելու չափանիշից բխում է, որ անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը պետք է հիմնված լինի անձնական տվյալների մշակման հանգամանքները եւ հետեւանքները գիտակցելու եւ հասկանալու, անձնական տվյալների մշակման (մշակվող տվյալների, մշակման նպատակի, այլն անձանց հնարավոր փոխանցման, տվյալների սուբյեկտի իրավունքների եւ այլնի) վերաբերյալ ճշգրիտ եւ լիարժեք տեղեկությունների վրա: Ընդ որում, տեղեկությունները պետք է հասանելի, հասկանալի եւ տեսանելի լինեն տվյալների սուբյեկտի համար, այլ ոչ թե «հասանելի ինչ-որ տեղ»:

Անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնության վերոնշյալ չափանիշներն արտացոլված են ՀՀ ներպետական օրենսդրությամբ: Այսպես, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տվյալների սուբյեկտի համաձայնությունը համարվում է տրված, և մշակողն այն մշակելու իրավունք ունի, երբ՝ 1) մշակողին հասցեագրած և տվյալների սուբյեկտի ստորագրած փաստաթղթում նշված են անձնական տվյալները, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաթուղթն իր բովանդակությամբ հանդիսանում է անձնական տվյալները մշակելու դեմ առարկություն. 2) մշակողը տվյալները ստացել է տվյալների սուբյեկտի հետ կնքված պայմանագրի հիման վրա և օգտագործում է այդ պայմանագրով սահմանված գործողությունների նպատակով. 3) տվյալների սուբյեկտն իր կամքով, օգտագործելու նպատակով բանավոր փոխանցում է մշակողին իր անձնական տվյալների մասին տեղեկությունները»: Ընդ որում՝ նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Տվյալների սուբյեկտի համաձայնությունը տրվում է գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բանավոր համաձայնության դեպքում՝ այնպիսի հավաստի գործողությունների միջոցով, որոնք ակնհայտորեն կվկայեն տվյալների սուբյեկտի՝ անձնական տվյալները օգտագործելու համաձայնության մասին»: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Տվյալների սուբյեկտի համաձայնությունը ստանալու փաստն ապացուցելու (...) պարտականությունը կրում է մշակողը»:

Միաժամանակ, անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել, որ համաձայնությունը միշտ ենթադրում է անձնական տվյալի մշակման վերաբերյալ անձնական տվյալների սուբյեկտների իրազեկվածություն: Այսպես, Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ «Անձնական տվյալներ մշակողը կամ սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված լիազորված անձը տվյալների սուբյեկտի համաձայնությունն ստանալու նպատակով ծանուցում է տվյալներ մշակելու մտադրության մասին»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ծանուցման մեջ նշվում են՝ 1) տվյալների սուբյեկտի ազգանունը, անունը, հայրանունը. 2) անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը և նպատակը. 3) մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը. 4) անձնական տվյալների հետ կատարման ենթակա գործողությունների ցանկը, որոնց համար հայցվում է տվյալների սուբյեկտի համաձայնությունը. 5) այն անձանց շրջանակը, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները. 6) անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը հայցող մշակողի կամ նրա ներկայացուցչի անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը) և գտնվելու կամ հաշվառման (փաստացի բնակության) վայրը. 7) տվյալների սուբյեկտի կողմից անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում պահանջելու կամ մշակման հետ կապված այլ գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկություններ. 8) հայցվող համաձայնության գործողության ժամկետը, ինչպես նաև համաձայնությունը հետ կանչելու կարգը և դրա հետևանքները:»:

«Ցանկացած կամահայտնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը» չափանիշին համադրելի են Օրենքի 9-րդ հոդվածի կարգավորումները, քանի որ մի կողմից նախատեսվում է համաձայնության տրամադրման լայն հնարավորություն այդ մասին **վկայող գործողությունների միջոցով**, մյուս կողմից Օրենքը սահմանում է, որ այդ գործողությունները պետք է լինեն **հավաստի**: Օրենքը նաեւ նշում է, որ բանավոր համաձայնության դեպքում այն համարվում է տրված, եթե տվյալների սուբյեկտը մշակողին իր անձնական տվյալների մասին տեղեկություններն օգտագործելու նպատակով բանավոր փոխանցում է **իր կամքով**, ինչը համադրելի է «ազատ տրված» չափանիշին: Համաձայնության՝ «որոշակի» լինելու չափանիշն արտացոլված է Օրենքի 4-րդ հոդվածում, որի համաձայն անձնական տվյալները պետք է մշակվեն **որոշակի նպատակներով**, ինչպես նաեւ 10-րդ հոդվածում, որի համաձայն՝ անձնական տվյալներ մշակողը տվյալների սուբյեկտի համաձայնությունը ստանալու համար պետք է նրան ծանուցի անձնական տվյալների մշակման **նպատակի մասին**: Համաձայնության՝ «տեղեկացված» լինելու չափանիշն ամրագրված է Օրենքի 10-րդ հոդվածով:

Համադրելով «Անձնական տվյալների պահպանման քաղաքականություն»-ը (դրա վերախմբագրված տարբերակը) համաձայնությանը ներկայացվող պահանջների հետ՝ Գործակալությունն արձանագրում է հետեւյալը.

- Գործակալության կողմից իրականացված ընտրանքային ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ավելացվելուց հետո «Անձնական տվյալների պահպանման քաղաքականություն» վերտառությամբ բաժինը ներկայացվում է ինչպես կայքի նոր օգտատերերին, այնպես էլ կայքի արդեն գրանցված օգտատերերին՝ բաժինն ավելացնելուց հետո առաջին անգամ մուտք գործելիս: «Անձնական տվյալների պահպանման քաղաքականությանը» հավանություն տալով միայն հնարավոր է շարունակել կայքում գրանցումը: Ընդ որում, «Անձնական տվյալների պահպանման քաղաքականություն»-ում առկա է «Համաձայնություն» վերտառությամբ բաժինը, որում նշվում է՝ «Կազմակեպության կողմից Ձեր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ Ձեր համաձայնությունը համարվում է տրված Ձեր կողմից Կայքում գրանցվելու և/կամ Կայքում Ձեր հաշիվ մուտք գործելու փաստով, ինչը համարվում է այնպիսի հավաստի գործողություն, որն ակնհայտորեն վկայում է Ձեր՝ անձնական տվյալները օգտագործելու համաձայնության մասին, որը տրված է անձամբ Ձեր կողմից, կամ, եթե Դուք անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչև 16 տարեկան անչափահաս եք, ապա Ձեր օրինական ներկայացուցչի կողմից: Տալով Ձեր համաձայնությունը Կազմակեպության կողմից Ձեր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ՝ Դուք միաժամանակ հաստատում եք, որ ծանոթացել եք սույն Քաղաքականության բովանդակությանը, այն հասկանալի և ընդունելի է Ձեզ համար և Դուք համաձայն եք սույն Քաղաքականության մեջ ներառված բոլոր դրույթներին:»: Նշվածը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ **«Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման համաձայնությունը համապատասխանում է «ցանկացած կամահայտնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը» չափանիշին, քանի որ տրվում է այնպիսի հավաստի գործողությունների միջոցով, որոնք ակնհայտորեն կվկայեն տվյալների սուբյեկտի՝ անձնական տվյալները օգտագործելու համաձայնության մասին:**

- Գործակալությունը հաստատված է համարում, որ dasaran.am կայքի օգտատերերց յուրաքանչյուրն ինքնուրույն է որոշում իր անձնական տվյալների մշակման համաձայնությունը տա Նոր Սերնդի Դպրոցին, թե՝ ոչ: Այս եզրահանգմանը Գործակալությունը եկել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուրը կարող է հրաժարվել անձնական տվյալների մշակումից ոչ միայն dasaran.am կայքում ի սկզբանե չգրանցվելու միջոցով, այլ նաեւ «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» «Տվյալների պահպանում եւ ժամկետ» վերտառությամբ բաժնով Նոր Սերնդի Դպրոցը հնարավորություն է տալիս հրաժարվել անձնական տվյալների մշակումից արդեն գրանցված օգտատերերին՝ մասնավորապես նշելով, որ «Եթե ցանկանում եք, որ մենք այլևս չմշակենք Ձեր անձնական տվյալները, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ (+374) 10 327 969 / 60 757 969 հեռախոսահամարներով կամ info@dasaran.am էլեկտրոնային փոստի միջոցով, որից հետո Ձեզ հետ կապ կհաստատի Կազմակերպության

ներկայացուցիչը, որպեսզի մենք կարողանանք հաստատել Ձեր ինքնությունը: Ձեր կողմից տրված անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնությունը պատշաճ կերպով հետ կանչվելու պարագայում, մենք կդադարեցնենք Ձեր անձնական տվյալների մշակումը և կոչնչացնենք Ձեր կողմից մեզ տրամադրված Ձեր անձնական տվյալները հետկանչն ստանալու օրվան հաջորդող երեսուն աշխատանքային օրվա ընթացքում: Ձեր կողմից տրված անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնության հետկանչի դեպքում կարող է փակվել կամ ժամանակավորապես արգելափակվել (սառեցվել) Ձեր անձնական հաշիվը Կայքում:»: Նշվածը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ **«Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման համաձայնությունը համապատասխանում է «ազատ տրված» չափանիշին, քանի որ տվյալների սուբյեկտն իր անձնական տվյալների մասին տեղեկությունները փոխանցում է մշակողին իր կամքով:**

- Գործակալությունը հաստատված է համարում, որ «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման համար ստացվող համաձայնությունը կոնկրետ է, վերաբերում է անձնական տվյալների մշակման հստակ եւ ճշգրիտ շրջանակի եւ սահմանված են անձնական տվյալների մշակման հստակ նպատակները: Մասնավորապես, «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» «Ձեր անձնական տվյալների մշակման իրավական հիմքը, նպատակները եւ կարգը» վերտառությամբ բաժնում նշված է. «Մենք մշակում ենք Ձեր անձնական տվյալները հետևյալ նպատակներով՝ կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը միտված առկա թվային գործիքների կատարելագործման նպատակով, Կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը միտված նոր գործիքների ներդրման նպատակով, սովորող-ծնող-դպրոց անընդհատ կապի պահպանման համար անհրաժեշտ միջոցների զարգացման, ինչպես նաև երեխաների կրթության գործընթացում ծնողների առավել ակտիվ ներգրավվածությունը ապահովող նոր, առցանց գործիքների ներդրման նպատակով, սովորողների ինտելեկտուալ շփման, դպրոցական, միջդպրոցական և համահայկական ինտելեկտուալ մրցույթների, խաղերի և կրթությունը խրախուսող այլ միջոցառումների միջոցով խելացի և շնորհալի սովորողների բացահայտման ու նրանց խրախուսման նպատակով, հայապահպանությանը միտված Dasaran կրթական հարթակի համահայկականացման նպատակով (մասնավորապես՝ Սփյուռքի համայնքների հայկական կրթօջախների ներառում, դպրոցահասակ երեխաներին հարթակից օգտվելու հնարավորության ընձեռում), Կայքում Ձեր կողմից գրանցվելու գործընթացի ապահովման, Ձեզ՝ որպես օգտատիրոջ անհատականացնելու, կեղծ օգտատերերի գրանցումը բացառելու նպատակով, Կայքի աշխատանքների առնչությամբ Ձեզ հետ կապ հաստատելու, Ձեր կողմից ուղղված հաղորդագրություններին, նամակներին և հեռախոսազանգերին պատասխանելու

նպատակով: Մենք նաև կարող ենք մշակել և վերլուծել Ձեր անձնական և այլ տվյալները, որպեսզի կառավարենք և բարելավենք Կայքի աշխատանքները, կարողանանք զարգացնել և բարելավել Կայքի օգտագործման հնարավորությունները, հայտնաբերենք և կանխենք Կայքի աշխատանքի թերությունները:»: Նշվածը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ **«Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման համաձայնությունը համապատասխանում է «որոշակի» լինելու չափանիշին, քանի որ անձնական տվյալները մշակվում են որոշակի նպատակներով, ինչպես նաեւ անձնական տվյալների սուբյեկտները ծանուցվում են անձնական տվյալների մշակման նպատակի մասին:**

- ինչ վերաբերում է «տեղեկացված» լինելու չափանիշին, ապա Գործակալությունը գտնում է, որ անհրաժեշտ է պարզել՝ արդյոք dasaran.am կայքի օգտատերերը ծանուցվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի բոլոր 8 կետերով սահմանված տեղեկությունների վերաբերյալ, ինչպես նաեւ՝ արդյոք ծանուցումը հասանելի եւ հասկանալի է օգտատերերին: Այսպես, «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» «Ներածություն» բաժնում ներկայացվում են ինչպես անձնական տվյալներ մշակողը, այնպես էլ անձնական տվյալների սուբյեկտը, իսկ «Համաձայնություն» բաժնում նաեւ՝ անգործունակության կամ սահմանափակ գործունակության կամ մինչև 16 տարեկան անչափահասի անձնական տվյալների մշակման համաձայնության՝ օրինական ներկայցուցչի կողմից տալու կանոնը: Անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը, նպատակները, ինչպես նաեւ անձնական տվյալների հետ կատարման ենթակա գործողությունների ցանկը ներկայացված են «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» «Ձեր անձնական տվյալների մշակման իրավական հիմքը, նպատակները եւ կարգը», «Cookie - ֆայլեր» եւ «Տվյալների վերլուծություն» բաժիններում: Մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը ներկայացված է «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» «Մեր կողմից մշակվող անձնական տվյալներ» բաժնում, իսկ այն անձանց շրջանակը, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները, ներկայացված է «Անձնական տվյալների տրամադրում երրորդ անձի» բաժնում: Տվյալների սուբյեկտի կողմից անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում պահանջելու կամ մշակման հետ կապված այլ գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաեւ հայցվող համաձայնության գործողության ժամկետը, ինչպես նաև համաձայնությունը հետ կանչելու կարգը և դրա հետևանքները ներկայացված են «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» «Ձեր իրավունքները» եւ «Տվյալների պահպանում եւ ժամկետ» բաժիններում:

Ինչ վերաբերում է ծանուցման՝ օգտատերերին հասանելի եւ հասկանալի լինելուն, ապա Գործակալությունը փաստում է, որ մի կողմից գործում առկա են

նյութեր (լուսապատճեններ facebook սոցիալական ցանցի քննարկումներից), որոնցում dasaran.am կայքի տարբեր օգտատերեր նշում են «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման պայմանների վերաբերյալ տեղեկացված չլինելու մասին: Մյուս կողմից գործակալությունը հաշվի է առնում, որ «Անձնական տվյալների պահպանման քաղաքականություն» վերտառությամբ բաժինն է ավելացել dasaran.am կայքում սույն վարույթի ընթացքում, իսկ Գործակալության ուսումնասիրությունը վկայում է, որ այն ներկայացվում է ինչպես կայքի նոր օգտատերերին, այնպես էլ կայքի արդեն գրանցված օգտատերերին՝ բաժինն ավելացնելուց հետո առաջին անգամ մուտք գործելիս: Նշվածը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ **«Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման համաձայնությունը համապատասխանում է «տեղեկացված» լինելու չափանիշին, քանի որ անձնական տվյալների սուբյեկտները ծանուցվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի բոլոր 8 կետերով սահմանված տեղեկությունների վերաբերյալ, ինչպես նաեւ ծանուցումը ներկայացվում է dasaran.am կայքի օգտատերերին:**

Միաժամանակ, Գործակալությունը չի կարող անտեսել գործի նյութերում առկա այն տեղեկությունները, որ dasaran.am կայքի օգտատերերը տեղեկացված չեն եղել «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման պայմանների վերաբերյալ: Ուստի, Գործակալություն գտնում է. որ Նոր Սերնդի Դպրոցը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան պետք է ապահովի **dasaran.am կայքի օգտատերերի պատշաճ իրազեկումը (ծանուցումը) համաձայնության ստացման համար:**

Ամբողջ վերոնշյալը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակումը չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 8-րդ հոդվածներով սահմանված՝ անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքին:

4.7. Սույն վարչական վարույթով որոշում կայացնելու համար անհրաժեշտ է պատասխանել հետեւյալ հարցին՝ համապատասխանում է արդյոք «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակումն անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքին:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: 2. Անձնական տվյալներ մշակողը պարտավոր է անձնական տվյալները մշակել այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է օրինական նպատակներին հասնելու համար: 3. Արգելվում է այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք

անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ: 4. Արգելվում է անձնական տվյալների մշակումը, եթե տվյալները մշակելու նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված կերպով: 5. Անձնական տվյալները պետք է պահպանվեն այնպես, որ բացառվի տվյալների սուբյեկտի հետ դրանց նույնականացումն ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է դրանց նախօրոք որոշված նպատակներին հասնելու համար:»:

Գործակալությունն արձանագրում է, որ սույն վարույթով վերհանված եւ «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» մեջ նշված անձնական տվյալներից յուրաքանչյուրի մշակումը համապատասխանում է անձնական տվյալների մշակման սույն վարույթով վերհանված եւ «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» մեջ նշված նպատակներին: Ավելին, «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» «Տվյալների վերլուծություն» եւ «Անձնական տվյալների տրամադրում երրորդ անձի» բաժիններում սահմանված է վերլուծություններն ապանձնավորված կերպով իրականացնելու եւ դրանք երրորդ անձանց Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության կրթության և գիտության նախարարություններին ապանձնավորված կերպով փոխանցելու (սահմանված նպատակներին ապանձնավորված կերպով հասնելու) կանոնը: Բացի վերոնշյալը, «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» «Տվյալների պահպանում եւ ժամկետ» բաժնում սահմանված է, որ «Մենք պահպանում ենք Ձեր անձնական տվյալներն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է Ձեր անձնական տվյալների մշակման վերը նշված նպատակներին հասնելու համար, եթե այլ ժամկետ սահմանված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:»:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակումը չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքին:

4.8. Սույն վարչական վարույթով որոշում կայացնելու համար անհրաժեշտ է պատասխանել հետեւյալ հարցին՝ համապատասխանում է ապահովված է արդյոք «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվող անձնական տվյալների անվտանգությունը:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «1. Մշակողը պարտավոր է ոչնչացնել կամ ուղեփակել անձնական այն տվյալները, որոնք անհրաժեշտ չեն օրինական նպատակին հասնելու համար: 2. Անձնական տվյալները մշակելու ընթացքում մշակողը պարտավոր է օգտագործել գաղտնագրման միջոցներ՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական համակարգերի պաշտպանվածությունը պատահական կորստից, տեղեկատվական համակարգեր անօրինական մուտք գործելուց, անձնական տվյալների անօրինական

օգտագործումից, ձայնագրումից, ոչնչացումից, վերափոխումից, ուղեփակումից, կրկնօրինակումից, տարածումից և այլ միջամտությունից ապահովելու համար: 3. Մշակողը պարտավոր է կանխել անձնական տվյալների մշակման համապատասխան տեխնոլոգիաների մատչելիությունը դրա իրավունքը չունեցող անձանց համար և ապահովել, որ այդ համակարգերի օրինական օգտագործողի համար հասանելի լինեն միայն իր կողմից մշակման ենթակա տվյալները և այն տվյալները, որոնցից թույլատրված է օգտվել: (...) 7. Անձնական տվյալներ մշակողները կամ սույն օրենքով նախատեսված այլ անձինք պարտավոր են պահպանել անձնական տվյալների գաղտնիությունը ինչպես անձնական տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո: (...)»:

Սույն վարույթով հաստատվել է, որ «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում մշակվող անձնական տվյալների անվտանգությունն ապահովելու համար Նոր Սերնդի Դպրոցի կողմից կիրառվում են բավարար տեխնիկական եւ կազմակերպչական միջոցառումներ: Մասնավորապես, տեխնիկական միջոցառումներից կիրառվում են End to End գաղտնագրում՝ օգտագործելով SSL, HTTPS, SSH, Ipsec, VPN, Web Frontened Proxy՝ DDOS պաշտպանության, վեբկայքերի հավելվածների անվտանգության պաշտպանության եւ WAF-ի (վեբ հավելվածների արգելապատնեշ) հետ (Cloudflare), վեբ հավելվածների եւ հաղորդակցության արգելապատնեշներ, մեկուսացված եւ կոնտեյնավորված միջավայր, որտեղ յուրաքանչյուր ծառայություն գործում է իր առանձնացված միջավայրում, բոլոր backend սերվերների ցանցային մեկուսացում (բոլոր backend սերվերներն առանձնացված են հանրային ցանցից, իսկ 80 եւ 433 մուտքերը բաց են միայն Cloudflare IP հասցեների համար): Ինչ վերաբերում է անձնական տվյալների մշակման անվտանգության ապահովման կազմակերպչական միջոցառումներին, ապա «Անձնական տվյալների պահպանման քաղաքականության» «Անձնական տվյալների պաշտպանություն եւ տեսանելիության սահմանափակում» բաժնում նշված է, որ «Մենք կիրառում ենք մեր տրամադրության տակ եղած անվտանգության ապահովման ֆիզիկական, տեխնիկական և կազմակերպչական բոլոր միջոցները Ձեր անձնական տվյալները որևէ չթույլատրված արտահոսքից, կիրառումից, փոփոխությունից և ոչնչացումից պաշտպանելու համար: Օգտատերերից յուրաքանչյուրին տրամադրվում են ծածկանուն և ծածկագիր անհատական էջ մուտք գործելու համար: Ըստ որում՝ ծնողին տեսանելի են միայն իր երեխայի տվյալները, ուսուցչին՝ միայն իր դասարանին (դասարաններին) և իր կողմից դասավանդվող առարկային վերաբերող տվյալները, փոխտնօրենին և տնօրենին՝ միայն իրենց դպրոցի տվյալները: Հետևաբար՝ ծնողին տեսանելի չեն որևէ այլ երեխայի առաջադիմության վերաբերյալ տվյալներ, ուսուցչին՝ որևէ այլ դասարանի կամ առարկայի վերաբերյալ տվյալներ, փոխտնօրենին և տնօրենին՝

որևէ այլ դպրոցի տվյալներ: Ձեր անձնական տվյալները Կայքում մուտքագրած դպրոցին (դպրոցի համապատասխան պատասխանատու աշխատակցին) տեսանելի են միայն անձնական տվյալները, որոնք իրենք են մուտքագրել: Կայքում գործում է հաղորդակցության փակ հարթակ (սոցիալական կայքի օրինակով), որտեղ անհատական ծածկանվան և ծածկագրի օգնությամբ մուտք գործելով՝ օգտատերը կարող է տեսնել այլ օգտատերերի հետևյալ տվյալները՝ անունը, ազգանունը, դպրոցը և դասարանը: Ձեր անձնական ամբողջական տվյալները որևէ մեկին հասանելի չեն: Կազմակերպության աշխատակիցների պարագայում ամբողջական տվյալների հասանելիությունը ևս սահմանափակ է: Տվյալներին որևէ կերպ հասանելիություն ունեցող յուրաքանչյուր աշխատակից Կազմակերպության հետ կնքում է գաղտնիության պայմանագիր: Այնուամենայնիվ, համացանցում գտնվող որևէ կայք չի կարող ապահովել 100% պաշտպանություն, և մենք չենք կարող պատասխանատվություն կրել մեր վերահսկողությունից դուրս տեղի ունեցած Ձեր տվյալների չթույլատրված մուտքի համար (օրինակ՝ երրորդ անձի կողմից Ձեր՝ օգտատիրոջ անվան և գաղտնաբառի չթույլատրված օրտագործման արդյունքում), որը հանգեցրել է Ձեր անձնական տվյալների արտահոսքի կիրառմանը, փոփոխությանը կամ ոչնչացմանը:»:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման դեպքում ապահովված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված՝ անձնական տվյալներ մշակելու անվտանգությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակումը չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 8-րդ հոդվածներով սահմանված՝ անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքին:
2. «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակումը չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքին:
3. «Դասարան» կրթական ծրագրի շրջանակներում անձնական տվյալների մշակման դեպքում ապահովված է «Անձնական տվյալների

պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված՝ անձնական տվյալներ մշակելու անվտանգությունը:

4. «Նոր Սերնդի Դպրոց» հասարակական կազմակերպությանը՝ ապահովել dasaran.am կայքի օգտատերերի պատշաճ իրազեկումը (ծանուցումը) համաձայնության ստացման համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին այն հանձնելու հաջորդող օրվանից և օրենքով սահմանված կարգով և ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ ԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ